ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Երևան **2026թ.**

«Էկովիլ Էներջի» ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Էմիլ Ստեփանյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ ***«Մատակարար»***), մի կողմից,

և

«-----» ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ **-------ի,** ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ ***«Սպառող»***), մյուս կողմից,

համատեղ կոչվելով ***«Կողմեր»***, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ ***«Կողմ»***,

առաջնորդվելով «ՀՀ Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ), էլեկտրաէներգետիկական բաշխման ցանցային կանոններով (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) և այլ իրավական ակտերով, կնքում են սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պայմանագրի համաձայն էլեկտրական էներգիայի մատակարարման մեկնարկի ամսաթվից սկսած և մինչև Պայմանագրի ավարտը Մատակարարը Սպառողին մատակարարում է էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը վճարում է մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.2. Մատակարարը պարտավոր է՝

2.2.1. Սպառողի հետ համաձայնեցված և սպառողին պատկանող էլեկտրաէներգիայի սպառման կետերին մատակարարել էլեկտրական էներգիա:

2.3. Մատակարարն իրավունք ունի՝

2.3.1 Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում:

2.3.2 Պայմանագրում նշված վճարման որևիցե ժամկետի խախտման դեպքում դադարեցնել Սպառողին էլեկտրական էներգիայի մատակարարումը, այդ մասին 1 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

2.4. Սպառողը պարտավոր է՝

2.4.1 Վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը՝ պայմանագրի 3.3 կետում նշված ժամկետներում:

2.4.2 Սպառողի սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու, վարձակալած տարածքը հանձնելու կամ բաշխման ծառայության պայմանագիրը դադարացնելու դեպքում առնվազն 20 (քսան) աշխատանքային օր առաջ դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և Պայմանագիրը լուծելու համար:

2.4.3 Սպառողի էլեկտրաէներգիայի մատակարարման հարաչափերի և/կամ սխեմայի, ենթաբաժանորդների փոփոխության, ինչպես նաև արևային կայանի տեղադրման կամ ավելացման դեպքում, առնվազն 20 (քսան) աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել Մատակարարին:

2.5. Սպառողն իրավունք ունի՝

2.5.1 Պահանջել Մատակարարից կատարել օրենքով և Պայմանագրով սահմանված պարտականությունները:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սպառված էլեկտրական էներգիայի արժեքը, որոշվում է հաշվարկային ամսում Հայաստանի Էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ին (այսուհետ ***«Բաշխող»***) պատկանող և Սպառողի տարածքում գտնվող առևտրային հաշվառքի սարքերի գրանցած ցուցմունքների տարբերության և հոսանքի, լարման չափիչ տրանսֆորմատորների գործակիցների և 3.3 կետում նշված էլեկտրական էներգիայի արժեքի արտադրյալով բազմապատկելու միջոցով:

3.2. Էլեկտրաէներգիայի սպառման ծավալի հետ կապված հարցերը քննարկվում են ուղիղ Սպառողի և Բաշխողի միջև ԷԲՑ, ԷՄԱ կանոններով և այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

3.3. Էլեկտրական էներգիայի արժեքը պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո առաջին ամսվա համար կազմում է **--,-- դրամ/կՎտժ** (առանց ԱԱՀ): Երկրորդ և բացառությամբ վերջին եկրու ամիսներից յուրաքանչյուր հաջորդիվ ամիսների համար՝

- մինչ հաշվարկային ամսվանը հաջորդող ամսի 15-ը կամ հաշիվ ապրանքագիրը դուրս գրելու օրվանից 4 աշխատանքային օրվա ընթացքում վճարելու դեպքում՝ **--,-- դրամ/կՎտժ** (առանց ԱԱՀ)
- հաշվարկային ամսվանը հաջորդող ամսի 16-22-ը ժամանակաշրջանում կամ հաշիվ ապրանքագիրը դուրս գրելու օրվանից 5-9 աշխատանքային օրվա ընթացքում վճարման դեպքում՝ **--,-- դրամ/կՎտժ** (առաց ԱԱՀ)
- հաշվարկային ամսվանը հաջորդող ամսի 23-29-ը ժամանակաշրջանում կամ հաշիվ ապրանքագիրը դուրս գրելու օրվանից 10-15 աշխատանքային օրվա ընթացքում վճարման դեպքում, ինչպես նաև Պայմանագրի լուծման դեպքում մատակարարման վերջին երկու ամիսների համար՝ **--,-- դրամ/կՎտժ** (առանց ԱԱՀ):

Ամսի 30-ից հետո կատարված վճարումները համարվելու են ժամկետանց և առաջացնելու են Պայմանագրի 4.2 կետով նախատեսված հետևանքներ:

Այսպիսով, յուրաքանչյուր ամսվա սակագինը, բացի առաջին և վերջին երկու ամիսների սակագներից, պայմանանավորվում է նախորդ ամսվա ընթացքում մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման ժամանակաշրջանով:

Արժեքներն իրենց մեջ ներառում են էլեկտրաէներգիայի մատակարարման հետ կապված բոլոր ծառայությունների սակագներն ու վճարները, բացի բաշխման ծառայության վճարից:

3.4. ՀՀ Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից շուկայում սահմանված սակագնային բաղադրիչների փոփոխման դեպքում 3.3-րդ կետով նախատեսված Պայմանագրի գինը կարող է համապատասխան տոկոսային կամ արժեքային հարաբերակցությամբ փոփոխվել, ինչի կապակցությամբ Կողմերը պարտավորվում են կնքել լրացուցիչ համաձայնագիր Պայմանագրի 3.3-րդ կետով սահմանված գնի փոփոխման վերաբերյալ:

Սակագնային բաղադրիչներ են համարվում՝

1. «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ առաքվող էլեկտրական էներգիայի սակագին
2. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ հաշվեկշռման առավելագույն սակագին
3. «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ Էլեկտրական էներգիայի հաղորդման

ծառայության սակագին

4. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի սակագին

5. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության սակագին

6. Երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության արժեք

7. Օրացույցային տարվա ընթացքում «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ պլանային կանգի ժամանակաշրջանը:

Ընդ որում, Կողմերը համաձայն են, որ իրավունք ունեն սակագնային վերանայման հայտ ներկայացնել ոչ հաճախ, քան տարեկան 1 (մեկ) անգամ:

3.5. Հաշվարկային փաստաթղթերի մեջ սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած Կողմը փաստի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում տեղեկացնում է մյուս Կողմին:

3.8. Կողմերը արձանագրում են, որ հաշվետու ամսվա ընթացքում Բաշխողի հարկային հաշիվներում արտացոլված էլեկտրական էներգիայի քանակը և Մատակարարի հարկային հաշիվներում արտացոլված մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը կարող են տարբերվել միմյանցից՝ առավելագույնը 1%-ի սահմաններում, ինչը համարվում է ընդունելի շեղում: Նշվածից ավել անհամապատասխանության դեպքում Սպառողը դիմում է ուղիղ Բաշխողին, պահանջելով շեղման վերաբերյալ պարզաբանում:

3.9. Մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման կարգը համարվում է հետվճարային, բացառությամբ պայմանագրի գործողության վերջին երկու ամիսների ընթացքում մատակարարվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարումը: Պայմանագրի գործողության վերջին երկու ամիսների համար վճարման կարգը կանխավճարային է, իսկ կանխավճարային գումարի հաշվարկի մեթոդաբանությունը ներկայացված է Պայմանագրի 8.3 կետով: Կողմերը համաձայնվում են, որ Մատակարարման վերջին երկու ամսվա դիմաց կանխավճար չկատարելը համարվում է վճարման ժամկետի խախտում և առաջացնում է Պայմանագրի 4.2 կետով նախատեսված հետևանքներ:

3.10 Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից հետվճարային կարգով սահմանված ժամկետների սիստեմատիկ խախտման դեպքում Պայմանագրի գործողության ընթացքում պահանջել Սպառողից հետվճարային սկզբունքից անցում կատարել կանխավճարային սկզբունքին:

4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈՐԱԿԸ, ԸՆԴՀԱՏՈՒՄԸ, ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.1. Էլեկտրաէներգիայի սպառման որակի և անընդհատության հետ կապված հարցերը քննարկվում են ուղիղ Սպառողի և Բաշխողի միջև ԷԲՑ, ԷՄԱ կանոններով և այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

4.2. Մատակարարն իրավունք ունի դիմել Բաշխողին սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելու պահանջով՝

4.2.1 Սպառված էլեկտրական էներգիայի դիմաց Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում:

4.2.2 Պայմանագրի լուծման կամ ժամկետի ավարտի պարագայում Մատակարարի կողմից ներկայացված վերջին մեկ կամ երկու ամսվա համար կանխատեսված կանխավճարային հաշվի դիմաց վճարման ուշացման դեպքում:

4.2.3 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, Պայմանագրով սահմանված կարգով:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

6.1. Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Պայմանագրի իմաստով ֆորս-մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են Կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

6.2. Պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

6.3. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին օրենքով նախատեսված ժամկետում տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև առաջացած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Կողմերի միջև երկշաբաթյա ժամկետում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում՝ ՀՀ օրենքների համաձայն:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի (այսուհետ՝ «ԷՄՇ») կանոններին համապատասխան ԷՄՇ Շուկայի օպերատորի կողմից Սպառողին ԷՄՇ մասնակցի (Մատակարարի) պրոֆիլում որպես սպառման կետ (կամ սպառման կետեր) միաժամանակ կամ փուլային եղանակով ավելացնելու պահից և գործում է 12 (տասներկու) ամիս, ժամկետի երկարացման հնարավորությամբ:

Պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 1 (մեկ) ամիս առաջ Կողմերը կարող ենք ծանուցել միմյանց պայմանագիրը չերկարացնելու մտադրության մասին: Նշված ծանուցման բացակայության պարագայում պայմանագրի գործողության ժամկետը համարվելու է երկարացված ևս 12 (տասներկու) ամսով:

ԷՄՇ Շուկայի օպերատորի կողմից Սպառողին ԷՄՇ մասնակցի (Մատակարարի) պրոֆիլում որպես սպառման կետ (կամ սպառման կետեր) ավելացնելու համար անհրաժեշտ է, որ Սպառողի Հաշվառքի սարքը կամ սարքերը համապատասխանեն ԷԲՑ կանոններով սահմանված պահանջներին և ներառված լինեն Բաշխողի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում: Վերը նշված պահանջներին չհամապատասխանելու դեպքում Սպառողը դիմում է Բաշխողին սարքերը համապատասխանացնելու հայտով, վճարելով ԷԲՑ կանոններով նախատեսված կանխավճարի գումարը:

8.2. Պայմանագիրը կարող է լուծվել՝

8.2.1 Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ պայմանավորված ժամկետում և Մատակարարի կողմից փաստացի մատակարարված, ինչպես նաև մինչև լուծման օրը

Մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի կանխատեսվող ծավալի համար կանխավճարային սկզբունքով հաշվարկված գումարը ամբողջությամբ վճարելու պայմանով:

8.2.2 Սպառողի կողմից միակողմանի՝ ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 2-րդ կետում նշված ժամկետում, այդ մասին պատշաճ, գրավոր տեղեկացնելով Մատակարարին և Մատակարարի կողմից փաստացի մատակարարված, ինչպես նաև մինչև լուծման վերջին օրը Մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի ծավալի համար կանխավճարային սկզբունքով հաշվարկված գումարը ամբողջությամբ վճարելու պայմանով: Ընդ որում կանխավճարը չվճարելը կամ ժամկետից ուշ վճարելը կհամարվի վճարման ժամկետի խախտում, առաջացնելով Պայմանագրի 4.2 կետով շարադրված հետևանք:

8.2.3 Մատակարարի կողմից միակողմանի՝ ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 3-րդ կետում նշված ժամկետում, այդ մասին պատշաճ գրավոր տեղեկացնելով Սպառողին և Մատակարարի կողմից փաստացի մատակարարված, ինչպես նաև մինչև լուծման ամսվա վերջին օրը Մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի ծավալի համար կանխավճարային սկզբունքով հաշվարկված գումարը ամբողջությամբ վճարելու պայմանով: Ընդ որում կանխավճարը չվճարելը կամ ժամկետից ուշ վճարելը կհամարվի վճարման ժամկետի խախտում, առաջացնելով Պայմանագրի 4.2 կետով շարադրված հետևանք:

8.2.4 Պայմանագրի 3.4 կետով նախատեսված սակագնի փոփոխության հետ Կողմերին մեկի անհամաձայնության դեպքում՝ այդ մասին մյուս կողմին ԷՄԱ կանոնների 68-րդ կետի 2-րդ և 3-րդ կետերում նշված ժամկետներում պատշաճ գրավոր տեղեկացնելու և Մատակարարի կողմից փաստացի մատակարարված, ինչպես նաև մինչև լուծման ամսվա վերջին օրը Մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի ծավալի համար կանխավճարային սկզբունքով հաշվարկված գումարը ամբողջությամբ վճարելու պայմանով: Ընդ որում կանխավճարը չվճարելը կամ ժամկետից ուշ վճարելը կհամարվի վճարման ժամկետի խախտում, առաջացնելով Պայմանագրի 4.2 կետով շարադրված հետևանք:

8.2.5 Բաշխողի հետ պայմանագրի լուծման դեպքում, այդ մասին Մատակարարին առնվազն 10 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնելու և Մատակարարի կողմից փաստացի մատակարարված, ինչպես նաև մինչև լուծման ամսվա վերջին օրը Մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի ծավալի համար կանխավճարային սկզբունքով հաշվարկված գումարը ամբողջությամբ վճարելու պայմանով: Ընդ որում կանխավճարը չվճարելը կամ ժամկետից ուշ վճարելը կհամարվի վճարման ժամկետի խախտում, առաջացնելով Պայմանագրի 4.2 կետով շարադրված հետևանք:

8.3 Ցանկացած պատճառով Պայմանագրի լուծման, ավարտի կամ դադարեցման պայմանավորվածության կամ կողմերից մեկի ցանկության դեպքում մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց հետվճարային վճարման կարգը դառնում է կանխավճարային: Մատակարարը ներկայացնում է Սպառողին լուծման ամսաթվի դրությամբ փաստացի սպառած էլեկտրական էներգիայի համար հարկային հաշիվ: Այնուհետև, հարկային հաշվով ներկայացված գումարը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարը ներկայացնում է Սպառողին Մատակարարի կողմից մինչև լուծման ամսաթիվը կանխատեսվող էլեկտրական էներգիայի մատակարարման դիմաց կանխավճարային հաշիվ:

Հարկային և կանխավճարային հաշիվների դիմաց վճարը ստանալուց հետո կողմերի մինչև կնքվում է Լուծման համաձայնագիր:

Կանխավճարային հաշվով ներկայացված սպառման ծավալի հաշվարկի հիմքում պետք է ընկած լինի պայմանագրի լուծման ամսվա և նախորդ ամսվա ընթացքում միջին ժամային սպառման ծավալի ցուցանիշը, գումարած 10% (տաս տոկոս) և պայմանագրային վերջին 2 ամիսների համար պայմանագրի 3.3 կետով սահմանված սակագինը

8.4. Պայմանագրի լուծումը, փոփոխումը կամ դադարումը չի ազատում մինչև

պայմանագրի լուծումը Պայմանագրով ստանձնած, բայց պայմանագրային ժամկետում չկատարած պարտավորությունների կատարումից:

8.5. Պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր կերպ և պայմանով, որ չեն հակասում Պայմանագրին, Հանձնաժողովի ընդունած և այլ ոլորտային իրավական ակտերին:

8.6 Պայմանագրի լուծման դեպքում Երաշխավորված Մատակարարի կողմից Սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու դեպքում կգործի ԷՄԱ կանոնների 82-րդ կետով սահմանված իրավակարգավորումը:

9. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

9.1. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Պայմանագրի շրջանակներում ծանուցումները համարվում են պատշաճ կատարված, եթե դրանք ուղարկված են Կողմին պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ կամ էլեկտրոնային փոստով՝ ներքոգրյալ էլեկտրոնային հասցեներին, մասնավորապես՝

Մատակարար՝ energy@ecoville.am

Սպառող՝ --------

9.2. Այն դեպքում, երբ Կողմը պատշաճ կարգով չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի/էլեկտրոնային հասցեի փոփոխության մասին, ապա պայմանագրում նշված ծանուցման վայրով կամ էլ փոստի հասցեով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1 Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ԷՄԱ կանոններով, ինչպես նաև այլ ՀՀ օրենսդրական ակտերով: Պայմանագրով սահմանված կարգավորումների և «Էներգետիկայի մասին» օրենքի կամ ԷՄԱ և ԷԲՑ կանոնների միջև հակասություն առաջանալու պարագայում առաջնահերթությունը տրվում է օրենքին և կանոններին:

10.2 Պայմանագրում հասկացություններն ունեն «Էներգետիկայի մասին» օրենքով, ԷՄԱ և ԷԲՑ կանոններով սահմանված նշանակությունը, եթե այլ բան ուղղակիորեն նախատեսված չէ Պայմանագրով:

10.3. Բոլոր տեխնիկական հարցերը, մասնավորապես՝ էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների, առևտրային հաշվառքի սարքերի (վերստուգիչ հաշվառքի սարքի ապահավաքակցման կամ փոխարինման) հետ կապված և այլ հարաբերությունները կարգավորվում են Սպառողի և Երաշխավորված մատակարարի (Բաշխողի) հետ կնքված պայմանագրով:

10.4 Մատակարարը իր պարտականությունների իրականացման համար Սպառողից կարող է պահանջել որոշ տեխնիկական տվյալներ՝ Բաշխողի հետ պայմանագիր, որից որոշ տվյալների Հաշվարկային կենտրոն ներկայացնելու նպատակով:

10.5. Ելնելով Էլեկտրական էներգիայի շուկայական հարաբերություններից Սպառողը տեղեկացվում է, որ իրեն կմատուցվեն էլեկտրական էներգիայի Բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ծառայություններ, որը կկարգավորվի Սպառողի և Բաշխողի (Երաշխավորված Մատակարարի) միջև կնքած Էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրով: Երաշխավորված մատակարարի կողմից Սպառողին մատակարարված էլեկտրական էներգիայի արժեքը հաշվարկվում է այդ սպառողական խմբի համար Հանձնաժողովի կողմից սահմանված սակագնի և մատակարարված էլեկտրական էներգիայի քանակի արտադրյալով:

10.6 Պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր Կողմի համար:

11. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար	**Սպառող**
«Էկովիլ Էներջի» ՍՊԸ	**«------» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց 42-44	**Հասցե** -------
ՀՎՀՀ 08213182	**ՀՎՀՀ** -----
Հեռ. + 374 77 777 816	**Հեռ.** +374 ------
Էլ. Փոստ.energy@ecoville.am	**Էլ. Փոստ** ------
Բանկ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	**Բանկ** «---
Հ/հ 2500011079120100	**Հ/հ** ------
Գործունեության լիցենզիա N 0700	
Տնօրեն՝ Էմիլ Ստեփանյան	**Տնօրեն** --------
_____	_____
(ստորագրություն, Կ. Տ.)	(ստորագրություն, Կ. Տ.)